



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱ ԴԱՏԱՐԱՆ

### Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 17-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «ՀՀ վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

1. 2021 թվականի հունվարի 29-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել ՀՀ վարչական դատարանի 2021 թվականի հունվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան դիմելու մասին» ՎԴ/5475/05/20 վարչական գործով որոշումը:

Վերոհիշյալ որոշմամբ ՀՀ վարչական դատարանը դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 17-րդ հոդվածի՝ Սահմանադրության 29-րդ հոդվածին համապատասխանության հարցը:

2. Դիմողը, մասնավորապես, նշել է, որ՝ «.... սույն գործով վեճի լուծման համար կիրառելի՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը՝ այնքա-

նով, որքանով ի տարբերություն ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների, քրեակատարողական ծառայության օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք չի վերապահում նաև հարկային և մաքսային մարմինների օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներին, հակասում է ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածին, քանի որ դրսևորվում է չարդարացված տարբերակված մոտեցում մի կողմից՝ ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների և քրեակատարողական ծառայության օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների, մյուս կողմից՝ հարկային և մաքսային մարմինների օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների միջև»:

**3.** Պատասխանողը խնդրում է Սահմանադրական դատարանին սույն գործով վիճարկվող հոդվածը ճանաչել Սահմանադրության 29-րդ հոդվածին համապատասխանող:

Պատասխանողը, մասնավորապես, եզրահանգում է, որ՝ «.... զինվորական կենսաթոշակի վերապահման պայմանը ոչ թե օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելն է, այլ ծառայողական պարտականություններն արտակարգ, կյանքի և/կամ առողջության համար առավել վտանգավոր պայմաններում կատարելու հանգամանքը: Ուստի, դիմումում բարձրացված հարցի շրջանակներում չի կարող խոսք լինել հարկային և մաքսային մարմինների օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների նկատմամբ՝ Սահմանադրության 29-րդ հոդվածով արգելված որևէ հիմքով խտրականության դրսևորման մասին»:

4. Ուսումնասիրելով դիմումը և գործում առկա նյութերը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով դիմում են Սահմանադրական դատարան, եթե հիմնավոր կասկածներ ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով:

Սահմանադրական վերոհիշյալ նորմն ամրագրվել է նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասով: Իսկ հիշյալ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանը պետք է հիմնավորի իր դիրքորոշումը նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ գործի լուծումը հնարավոր է միայն վիճարկվող դրույթի կիրառման միջոցով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են նույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր, որոնցից են, ի թիվս այլնի՝ դիմողի՝ տվյալ հարցով Սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու չլինելը (1-ին մասի 2-րդ կետ):

Սույն գործով դիմող ՀՀ վարչական դատարանն իր վարույթում գտնվող կոնկրետ գործի լուծման համար կիրառելի է համարում և վիճարկում է Օրենքի «Չինվորական կենսաթոշակի իրավունքը» վերտառությամբ 17-րդ հոդվածը:

Սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ Օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է կենսաթոշակի տեսակները՝ աշխատանքային և զինվորական: Օրենքը սահմանում է նաև, որ զինվորական կենսաթոշակը ներառում է երկարամյա ծառայու-

թյան, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակները՝ վերջիններիս հետ կապված հարցերը կարգավորելով առանձին իրավադրույթներով: Մասնավորապես, Օրենքի 18-րդ և 19-րդ հոդվածներով սահմանվում են երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը, ինչպես նաև այդ կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը:

Սույն գործով վիճարկվող 17-րդ հոդվածը սահմանում է.

«1. Ջինվորական կենսաթոշակի իրավունք ունի՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների և Հայաստանի փրկարար ծառայության (այսուհետ նաև՝ համապատասխան մարմիններ) համակարգի հրամանատարական և ոչ հրամանատարական (սպայական, ենթասպայական, շարքային) կազմի ծառայողը.

2) վարժական հավաքների կանչված զինապարտը և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցը.

3) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողը և դատական ակտերի հարկադիր կատարողը»:

Վիճարկվող հոդվածի իրավակարգավորումից, մասնավորապես, հետևում է, որ՝

ա) ընդհանուր սահմանվում է զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, **որում չեն առանձնացվում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցները,**

բ) զինվորական կենսաթոշակի իրավունք, ըստ էության, վերապահվում է «Ջինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով զինծառայողներ համարվող և զինծառայողներին հավասարեցված որոշակի խումբ անձանց:

Հարկ է նշել, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի «Զինծառայողների դրամական ապահովությունը և սոցիալական ապահովությունը» վերտառությամբ 6-րդ բաժնի դրույթների կիրառման իմաստով հարկային և մաքսային մարմինների, ներառյալ՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցները չեն համարվում զինծառայողներ կամ զինծառայողներին հավասարեցված անձինք:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով ՀՀ վարչական դատարանի վարույթում գտնվող կոնկրետ գործի՝ դիմողի իսկ կողմից վկայակոչված փաստական հանգամանքները և բարձրացված հարցի ենթադրյալ հակասահմանադրականության մասով դիմողի հիմնական վերլուծությունները վերաբերում են երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի նշանակմանը: **Դրա հետ կապված՝ Օրենքի կոնկրետ իրավադրույթները սույն գործով չեն վիճարկվել:** Դիմողը, սույն գործով վիճարկելով **միայն Օրենքի ընդհանուր իրավակարգավորող** 17-րդ հոդվածը, չի ներկայացրել ինչպես փոխկապակցված այլ օրենսդրական իրավակարգավորումների, այնպես էլ Օրենքի կոնկրետ իրավադրույթների համակցության մեջ խտրականության արգելքի սահմանադրական սկզբունքի խախտման վերաբերյալ **բավարար հիմնավորումներ:** Բացի դրանից, հարկային և մաքսային մարմինների, ներառյալ՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներին չներառելը Օրենքով զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակում ոչ թե պոզիտիվ-իրավական կարգավորման, այլ ենթադրյալ օրենսդրական բացի հարց է, ինչին դիմողը չի անդրադարձել: Ընդ որում՝ օրենսդրական բացի առկայության հիմնավորումից զատ դիմողը պետք է հիմնավորեր նաև, որ ենթադրյալ օրենսդրական բացը պետք է հանգեցրած լիներ խտրականության արգելքի սահմանադրական սկզբունքի խախտման, այսինքն՝ լիներ Սահմանադրական դատարանի իրավասության տիրույթում:

Ամփոփելով Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողը չի պահպանել Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի պահանջները, ինչի պայմաններում իրավասու չէ դիմելու Սահմանադրական դատարան, ըստ այդմ՝ առկա է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը և հիմք ընդունելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, ինչպես նաև 71-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը՝ Սահմանադրական դատարանը  
**Ո Ր Ո Շ Ե Ց .**

«ՀՀ վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՀ**



**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

13 ապրիլի 2021 թվականի  
ՍԴԱՈ-76